

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը եւ Սիրիայի Արաբական Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Կողմեր), ցանկանալով զարգացնել երկկողմ հարաբերությունները առողջապահության եւ բժշկագիտության բնագավառներում եւ ընդունելով, որ այս համագործակցությունը կնպաստի իրենց երկրների բնակչության առողջական վիճակի բարելավմանը,

համաձայնեցին հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը, հիմնվելով սույն Համաձայնագրի եւ իրենց երկրների ազգային օրենսդրության վրա, պայմանավորվում են իրականացնել համագործակցություն առողջապահության եւ բժշկագիտության բնագավառում, որը կներառի, մասնավորապես, հետեւյալ ոլորտները.

- որակավորում եւ ուսուցում,
- դեղերի համատեղ արտադրության կազմակերպում եւ աջակցություն Կողմերի պետությունների տնտեսավարող սուբյեկտների փոխադարձ առևտրի զարգացմանը,
- տեղեկատվության փոխանակում,
- մասնագետների եւ պատվիրակությունների փոխանակում,
- մասնագետների մասնակցություն Կողմերի կազմակերպած համաժողովներին եւ գիտաժողովներին:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերը, կկազմակերպեն փորձագետների փոխայցելություններ առաջնահերթ համարվող եւ ուղարկող Կողմի առաջարկված թեմաների շուրջ՝ նպատակ ունենալով փոխադարձաբար լավ ուսումնասիրել միմյանց առողջապահական համակարգերը եւ իրենց առողջապահական ու գիտական կադրերի ուսուցման գործընթացը:

Գործուղման մեկնող փորձագետների համար ուղարկող Կողմն իր վրա է վերցնում երկու մայրաքաղաքների միջեւ ճանապարհածախսը, ինչպես նաեւ այցելության ընթացքում երկրի ներսում տրանսպորտի, հյուրանոցում կեցության եւ օրապահիկի ծախսերը:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերը համաձայնեցին դեղորայքի արտադրության ոլորտում.

- խրախուսել երկու երկրների միջեւ արտահանումը եւ, երկրներից յուրաքանչյուրում գործող կանոններին համապատասխան, ստեղծել եւ դյուրացնել դեղորայքի գրանցման գործընթացը,

- ուղիներ փնտրել երկու երկրներից մեկում արտադրված դեղորայքին առաջնահերթություն տալու ուղղությամբ՝ մյուս երկրում պահանջարկը բավարարելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը կխրախուսեն բժշկական պարբերականների, առողջապահական ուսումնական նյութերի եւ ցուցապաստառների, առողջապահական վիճակագրական տեղեկությունների եւ վարակիչ հիվանդությունների մասին համաճարակաբանական տեղեկագրերի փոխանակումը,

համագործակցություն կզարգացնեն բժշկական հրատարակչությունների միջև, ինչպես նաև խնդրանքի դեպքում, կփոխանակեն տեղեկատվություն առողջապահական օրենսդրության մասին:

ՀՈՂՎԱԾ 5

Կողմերը մյուս Կողմի մոտ պաշտոնական այցով գտնվող քաղաքացիներին, ինչպես նաև դիվանագիտական ու հյուպատոսական անձանց անհետաձգելի բժշկական միջամտություն պահանջող դեպքերում փոխադարձաբար կապահովեն անվճար բժշկական օգնությամբ, անհրաժեշտության դեպքում՝ հիվանդանոցային, ինչպես նաև դեղորայքով եւ բժշկական նյութերով:

Կողմերից մեկի տարածքում անհետաձգելի բժշկական միջամտություն պահանջող վիճակների դեպքում հյուրընկալող Կողմը իր քաղաքացիների համար սահմանված կարգով կապահովի բժշկական խնամք ժամանակավոր այցելության մեջ գտնվող մյուս Կողմի զբոսաշրջիկների համար, մինչև հիվանդի առողջական վիճակը թույլ կտա նրան տեղափոխել իր երկիր:

Մեծ համաճարակային բնույթ ունեցող վարակիչ հիվանդությունների դեպքում յուրաքանչյուր Կողմ կապահովի անվճար բժշկական ծառայություն իր երկրում ժամանակավորապես գտնվող մյուս Կողմի քաղաքացիների համար: Հենց որ հիվանդի առողջական վիճակը թույլ տա նրան տեղափոխել, հյուրընկալող Կողմը կերաշխավորի, եթե անհրաժեշտ է, դեպի ծագման երկրի սահման անվճար տեղափոխում, որտեղ հիվանդի խնամքը կստանձնեն ազգային բժշկական մարմինները:

Կողմերը, փոխադարձ համաձայնության հիման վրա, ախտորոշման եւ բուժվելու նպատակով հիվանդներ կարող են ուղարկել մյուս Կողմին եւ այդ դեպքում ուղարկող Կողմը կհոգա բոլոր ծախսերը:

Կողմերից մեկի քաղաքացու՝ մյուս Կողմի տարածքում մահվան դեպքում Կողմերը, փոխադարձության հիման վրա, կապահովեն անվճար դատաբժշկական ծառայություններ, ներառյալ գմռումը եւ պահպանման այլ միջոցները, իսկ դիակի տեղափոխման ծախսերը կհոգա հանգուցյալի ընտանիքը:

ՀՈՂՎԱԾ 6

Կողմերը սույն Համաձայնագրի իրականացմանն առնչվող հարցերի կարգավորման նպատակով կստեղծեն Համակարգող խումբ՝ բաղկացած յուրաքանչյուր Կողմի երեք ներկայացուցիչներից, որի նիստերը հաջորդաբար կգումարվեն Երեւանում եւ Դամասկոսում:

Համակարգող խումբը կգործի իր կողմից հաստատված կանոնակարգին համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 7

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կձեւակերպվեն առանձին արձանագրությամբ:

Արձանագրություններն ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված կարգով եւ կհանդիսանան վերջինիս անբաժանելի մասը:

ՀՈՂՎԱԾ 8

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա համար անհրաժեշտ՝ Կողմերի երկրների ազգային օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերն ավարտելու մասին դիվանագիտական ուղիներով վերջին ծանուցման օրվանից եւ գործում է անորոշ ժամկետով:

Սույն Համաձայնագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերից որեւէ մեկի՝ այդպիսի մտադրության մասին դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին ծանուցելու օրվանից վեց ամիս հետո:

Համաձայնագրի գործողությունը դադարեցվելու դեպքում դրա շրջանակում որեւէ անավարտ համագործակցություն կամ ծրագիր ուժի մեջ է մնում մինչեւ իր ավարտը:

Կատարված է Երեւան քաղաքում, 2004 թ. օգոստոսի 5-ին, երկու օրինակով, հայերեն, արաբերեն եւ անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի մեկնաբանման ընթացքում որեւէ տարաձայնություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2005 թ. հուլիսի 1-ից:

ՀՀԱԳՆՊՏ 2006/ 8(16), ԵՄՊ, 28.12.05, անգլերեն բաժին, հոդ. 18

AGREEMENT

Between the Ministry of Health of the Republic of Armenia and the Ministry of Health of the Syrian Arab Republic of cooperation in the field of Public Health and Medical Sciences

The Ministry of Health of the Republic of Armenia and the Ministry of Health of the Syrian Arab Republic, (hereinafter referred to as "Parties"), desirous to promote bilateral relationships in the field of public health and medical sciences and recognizing that this cooperation will contribute to the improvement of the health status of their population.

Have agreed as follows

Article 1

Based on this agreement and the national legislation of their countries Parties agreed to implement cooperation in the field of health and medical sciences including the following aspects:

- Qualification and training.
- Organization of drugs joint production and assistance to the development of mutual trade by managing subjects of the Republics of two Parties.
- Exchanging information.
- Exchanging delegations and specialists.
- Participation of specialists in conferences and symposia organized by both parties.

Article 2

The Parties will organize study visits of delegations of experts on such themes as judged as priorities and proposed by the sending Party aiming at better mutual knowledge of the health care delivery systems in the two countries and better training of own health care and research staff.

For the travelling experts the sending Parties will cover round-trip fees between the two capitals, and also cover domestic transport for the duration of the visit, hotel accommodation and subsistence allowances.

Article 3

The two parties agreed in the field of pharmaceutical industry.
- To encourage the export between the two countries and to establish and facilitate drug registration according to the rules applicable in each

country.

Explore ways to give priority in the medicine in one of the two countries in order to fill the shortages in the other country.

Article 4

The Parties will promote the exchange of medical journals, health education materials and posters, health statistics and epidemiological reports on communicable diseases, will develop cooperation between the medical publishing houses, and on request will exchange information on health legislation.

Article 5

The Parties shall provide on a basis of reciprocity, to the citizens of the other party, and staying temporarily in their country for official purposes, including diplomatic and consular personnel, free health care, medication and health materials, as well as free hospitalisation if needed, in cases of urgent medical intervention.

In cases of urgent medical intervention during the temporary sojourn of the tourists on the territory of the party, the hosting Party will ensure health care in accordance with the regulations in force for own citizens, until the patients condition allows transportation to his or her country without unfavourable medical consequences.

In case of communicable diseases of majors epidemiological impact, citizens staying temporarily on the territory of the other Party shall receive free medical care.

As soon as the patients condition allows transportation, the hosting Party will ensure, if necessary, free transportation to the border of the country of origin where the patient will be taken over by the national medical authorities.

The Parties can send patients, for diagnosis and treatment, to the other Party, on a basis of mutual agreement for each individual case, in which case costs will be paid by the sending Party.

In case of death of citizens of one of the parties on the territory of the other party, the parties will ensure, on the basis of reciprocity, free forensic services, including embalment or other means of conservation of corpses. Transport expenses will be covered by the family of the deceased.

Article 6

To regulate the implementation process of the Agreement, the Parties will create a joint coordinating group involving 3 persons from each Part which will be held, in turn, in Yerevan and Damascus.

The joint coordinating group will follow his own legislation system.

Article 7

Changes and additions can be made in the text of the present Agreement agreed upon by mutual consent of the Parties that will be defined in separate protocols.

The protocols will come into force according the system of the coming into force of the Agreement as its integral part.

Article 8

Present Agreement will come into force on the date of the last notification of completion in due course of all the procedures in accordance with domestic legislation of the Parties and will remain valid for indeterminate period.

The processing of the Agreement can be terminated six months after the diplomatic notification about the intention of the Parties.

In case of denunciation of the present Agreement, any programme of exchange of cooperation undertaken under it and not yet completed, will remain valid until completion.

Done in duplicate at Yerevan on 5 August 2004, in Armenian, Arabic and English languages, both texts being equally authoritative.

In case of disagreement in interpretation, the English version shall prevail.

The Agreement has entered into force on 01.07.2005.